

## ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՅԱՐՍ.ԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Յնօրիս Պուրցելինի մէջ տպուած են մի շաբք յօդուածներ, որոնք պատմականօրէն շատ լաւ պարզում են հայ-վրացական յարաբերութիւնները: Կարեոր համարելով երկու աղջերի համերաշխութիւնը, մնաք ուզում ենք որ մեր ընթերցողները իմանան վրացիների գդգոնութեան բուն պատճառները հայերից, այդ նպատակին կարելի է հասնել պ. կալամիի ծանօթացնելով յօդուածների հետ:

«Մեր կարծիքը հայ-վրացական փոխադարձ յարաբերութիւնների մասին արդէն յատնել ենք: Հոգով և սրտով կողմնակից ենք համերաշխութեան համահաւասար իրաւունքներով: Կովկասեան ազգերի միութիւնը մնաք ներկայացնում ենք որպէս լուսաւոր և ուժեղ ապագայ: Այս միութեան համար հարկաւոր է, որ որքան կարելի է բոլորս լինենք անկեղծ, ուսումնասիրենք այսօրուայ մեր անհամաձայնութեան պատճառները, որպէս զի ոչ միայն տեսնենք իրար, այլ և հասկանանք միմեանց:

Վերջին ժամանակներս մեր հասարակութեան մէջ զարթնեց հետաքրքրութիւն դէպի հայերը՝ տպում են նամակներ հայերի վերաբերամբ, թարգմանում են հայոց լրագիրների յօդուածները մեր փոխադարձ անհամաձայնութիւնների վերաբերեալ: Ամենքս էլ հետաքրքրում ենք, թէ ինչ են մտածում և ինչ են գրում հայ գրողները մեր մասին: Սա լաւ նշան է և պիտի աշխատենք աւելի և աւելի մօտ ծանօթանալ հայ գրողների և հասարակութեան հետ: Մեր լրագիրները մեծ ծառայութիւն կը մատուցանեն վրացիութեան, ևթէ աւելի մեծ աշխատանք և լուսաբանութիւն մազնեն այն շաբքաշ հարցերից մէկի մէջ որ մկրտուած է հայ-վրացական անուամբ: Այսպիսի փոխադարձ յարաբերութիւնների հարցեր եղել են և կան ամեն տեղ, որտեղ մի շըանակի մէջ, մի հողի վրայ ապրում են այլ և ազգութիւնների անդամները: Այս հարցը ոչ հարածէ և

ոչ հեղինակած, այլ խևական կետնքի ներևուցն է։ Չենք կուրող անցնել այս հարցի կոզմով և մատեն՝ որ Նա բնիւ ըստ Բնագեան կը լուծուի Խնքն ըստ Բնագեան երկրագնդիս վրայ ոչինչ չի շմառում և ամեն բանի մէջ հարկաւոր է մարդկային բանականութիւնը։ Հայ-վրացական անհամաձյանութիւնը մեր կեանքի մայր հարցերիցն է և պիտի աշխատենք նրա համար, ինչպէս որ ուրիշ ցաւերի համար։

Մենք կամնում ենք այս յօզուածներով ծանօթացնել ընթերցանսերին՝ թէ ինչպէս արտայայտուեց վրաց գրականութեան մէջ մեր և հայոց անհամաձյանութիւնը, Բնչից առաջացաւ դա և ինչ հայեացը ունէին դրա մասին վրաց գրողները։ Հետաքրքիր է զիտենանք թէ մի քանի հարցերը հիմա ձնուեցան, թէ առաջուց էլ զոյսութիւն ունէին և կամ մի քանի դրոցներ ինչպէս էին նայում հայ-վրացական անհամաձյանութեան վրայ, Եթէ որևէ է մէկը նրանցից փոխեց իր կարծիքը—բնչից առաջացաւ դա։ Օրինակի համար, կարծում ենք որ Թիֆլիսի ընտրութիւնների մրցութիւնը սկսուել է վերջին տաս տարուայ ընթացքում, այս ինչ ինչպէս երեւում է քան և հինգ տարուց առաջ էլ կատաղի կախ են մզելիս եղել իրար դէմ վրացիք և հայերը։

Վրաց մամուլի հայրն է Սերգէյ Մեսիխն և մենք եւ կը սկսենք նրա «Դրուբառից» \*):

«Դրուբառ» տեսնում էր վրաց-հայկական անհամաձյանութիւնը Քարթ-կախէթի զիւղերում անտեսական հոգի վրայ, Թիֆլիսում քաղաքային բնշնագարութեան մէջ, տեսնում էր նաև զուտ ազգային շահների ընդհարումն (լեզու, վրացի կաթոլիկներ և այլն), տեսնում էր վրացների նեղուիլը հայերից, բայց հաւատում էր որ այս անհամաձյանութիւնը կ'անցնէ, որ ամբողջ հայ ազգը չէ մնաց նեղողը և քարոզում էր փոխաղարձյարգանք և միութիւն։

\*). «Դրուբառ» հիմնուել է 1866 թ. մարտի 4-ին, նրա հրատարակչը մինչեւ 1882 թիւը եղել է Առ. Մելիքիշլիիր խմբագիրը, մինչեւ 1869 թ.-9. Ակրեմելին Այս տարուանից մինչեւ 1883 թ. մալիսը—Ա. Մելիքի 1873 մինչեւ 7-ի թիւը Ա. Մեսիխն արտասահմանումն էր և յրազրի ժամանակաւոր խմբագիրն էր Ար. Առթքիխնիզզէ (թէպէս և Ա. Մեսիխն աշխատակցում էր և այդ ժամանակ դրանց)՝ 1883 թ. մալիսի 9-ից լրացիրը զեկագարում է Ա. Մաշտրելիից, որն և շուրջ զառա նրա խմբագիրը և լիսկասար տէրը։ «Դրուբառ» փակուց կառափարշական կարգարութեամբ նրա վերջին Ներ լուս տեսա 1885 թ. սեպտեմբերի 14-ին։ «Դրուբառ» առաջ լուս էր տեսնում շարաթը մի անգամ։ 1875 թուից շարաթը երեք անգամ, իսկ 1877-թուին նա զառա ամենօրեւակ։ 1880—1881 թ. «Դրուբառ» և «Նեմրիս» լրացիրները մէկ խմբագրութիւն ունեին։

Առաջին համակ հայերի դէմ տպուեց լրագրի 1870 թուի  
№ 22-ում, որ վերաբերում է հայ վաճառականների անտեսա-  
պէս ուժեղանալուն Քարթալինայի մէջ... «Սարկութիւնը վեր-  
ջացաւ և հիմա յուսալի է որ այստեղի կալուածների մեծ մասը  
կանցնի պրիկազի և հայոց ձեռքը, Պիտի տեսնէք՝ թէ որքան  
օգուտ են տալիս նրանք պարապաններին: Հրէաները և հա-  
յերը քիչ է մնում որ քերթեն բոլոր վրայիններին: Յաճախ պա-  
տահում է, որ առկոսները երկու անգամ վերակշռում են պարաք  
տուած փողին»: Այս նամակը ուղարկուած է Քարթի գիւղից:  
Այս տեղից ակած այսպիսի բողոքներ հայերի վերաբերմամբ  
սովորական երեւոյթ են կազմում մեր լրագրութեան մէջ: 1871  
թուականի № 38-ում Սղնախից գրում են, որ նրանց վաշխա-  
ռուները մի թումանի վրայ տարեկան 12-ից մինչեւ 24 րուրիի  
տոկոս են վերջնում: Գիւղացինների կարողաթիւնը անցնում է  
վաճառականների ձեռքը, մեծ պարտք կայ նաև իշխան աղ-  
նուականների կարուածների վրայ: 1872 № 15-ում նկարա-  
գրուած է հայ վաճառականի խորամանկութիւններից մէկ օրի-  
նակ՝ մի գիւղացի պարտք է վերցրն հայից, այնուհետեւ վար-  
ձուել է ուրիշի մօտ, ծառացել է, հաւաքել է փող, յետոյ տուն  
վերապանալիս ճանապարհին հանդիպել է պարտատէր հային,  
վճարում է նրա պարտքը, բայց մուրհակը յետ չի ստանում  
նրանից, քանի որ վաճառականը յայտնում է նրան որ չի վերց-  
րել իր հետ, ուստի նա կարող է յետոյ զնալ նրա մօտ և ստա-  
նալ մուրհակը, բայց «յետոյ» նրան չի սալիս այդ մուրհակը, որ  
յանձնում է պարտատէր վրայուն այն ժամանակ, երբոր երկ-  
րորդ անգամ ստանում է դրանից իր պարտքը Թղթակիցը վեր-  
ջացնում է այս նամակը նրանով՝ որ վրայի գիւղացին միշտ  
նեղութիւն կը կրի, քանի որ հայերը տիրապետում են: 1874  
թուի մի №-ում կարգում ենք՝ «Գիւղական լրագիրը իմացել է  
որ Քիղիղի մէջ ամրող գիւղի կալուածները անցեալ են մի վա-  
ճառականի ձեռքը: Ամբողջ Վրաստանում շատ է տարածուած որ  
հող-կալուածները, ինչպէս ազնուականների, նոյնպէս էլ գիւ-  
ղացինների անցնում են վաճառականների ձեռք: Եթէ այս բանը  
գլուխ պահելով և ուրիշ միջոցներով (գիւղական բանկեր գիւ-  
ղատնտեսական դպրոցներ) չը կանգնեցնենք, մի գեղեցիկ օր  
կը տեսնենք մեզ ալքատացած, իսկ մեր հող ու կալուածքը  
վաճառականների և փողով հարուստ ալլազգինների ձեռքին»:

Ահա էլի մի պատկեր, կը գայ հայ վաճառականը գիւղ, կը գտնի  
սանահայր, կը ակսի գիւղացու հետ այլ և այլ բաներից խօսել,  
գովել նրան, խաբելով կը ծախէ նրան ալքանք (մեծ մասամբ  
փթած և անպէտք) նիսիա, յետոյ կը գայ կալի ժամանակ, որ

սրբազի ստանայ իր նիսխան և այժմ էլ կը խարի գիւղացուն քաշի ու շամի մէջ Ալերզզ պրզինարերութիւնը անցնում է հայր ձեռքը, զիւղացուն ոչինչ չի մնաւ և ինչ այդի որ կը հաւանի վաճառականը, կը ծանօթանայ նրա ակրոջ հետ, կը բարեկամանայ, մնայ գրուով կը վերցնէ նրա այզին, առկա առկոսի վրայ կը զայ և ի վերջոյ կ'անի այզին (Եղուէրա 1875 թ. № 68), և մեր արդինարերութիւնը ստանայինն է, յանախ նը լսէք զիւղացուց, գրում նև 1875 թ. № 91-ում, որա մէջ կը համեզաւէք, եթէ հանդիպէք զիւղում ննձի ժամանակ. հնաց կը սկըսուի թէ չէ հունձը, կը վերցնեն իրանց զլուխը վաճառականները և մինչեւ հացի կարմելը հարիւրներով թրեւ կը զան զիւղից զիւդ. կը կանգնեն զիւղացու դունը և զուով փաթաթում նո նրա շնբին փթած և ընկած ապրանքը իր սավարական զնից երեք անգամ թանկը ֆիզիգի մէջ, որտեղ կան բարակատաներ, այդիներ և մարդագետներ, բոլորը սղնախնդիր հայերի ձեռքին է—հարդում ննք 1877 թ. № 225-ում:

Այս մէջ բերած լուրերը բոլորովին բաւական եօ, որպէս զի ներկայացնենք մեզ մեր զիւղացիների դրութիւնը, Գիւղացու տնտեսական պայմանները այնպէս են, որ նա սախազուած է զիմնի վաճառական միջնորդին, որպէս հում նիւթ առնողին և ապրանք վճարողին և վաճառական-բանկեր-վաշխառուին. որ նրան վճարել է տալիս 100—200<sup>0/0</sup>, Գիւղացին. Բնշապէս նաև ազնուականն ու իշխանը՝ լաւ են տեսնում, թէ ինչպէս իրանք կորչում են և նեղուած են վաճառականից և, ընականաբար, նրանց մէջ ծնւռում է ատելութիւն, թշնամութիւն և զզուաչք դէպի այդ վաճառականը, նա մանաւանդ որ նա պատկանում է այլ ցեղի Արդարութիւնը պահանջում է յիշել և այն որ թշնակիցները յիշատակում են որ վաճառականները միայն հայերից չեն, նրանց մէջ կան նաև վրացիներ, հրէաներ, ասում են որ վաճառականները մեզ ազքատացրին, բայց այդ երեւյթի մէջ չեն մեղադրում միայն հայ վաճառականներ. Մի թշնակից հայ վաճառականին նախատելուց յետոյ աւելացնում է, որ նա զրանով չի ուզում զիազել ազգութիւններին, և չի ուզում հաստատել, որ անարդարութիւնը, անկիրթ ժողովրդին կողովանելը, անխողութիւնը և անկարգութիւնը միայն հայերիցն է: Քիզիղի մէջ շատ հայերի մնձ մասը նամաւսով, խղճով և ծշմարտութեան հետեւող է (1877 թ. № 225): Բայց սա ի հարկէ չի փոխում ընդհանուր պատկերը, զիւղի մէջ վաշխառու-վաճառականը՝ հայն է և այդ բանը կրկնակի աննորմալ է (անրնական) գարձնում դրութիւնը:

Ինչպէս է նայում ինքը խմբագրութիւնը հայ վաճառա-

կանոների կողմից մեր գիւղերի այսպէս նեղուելուն: Նա տեսնում էր միայն վաճառականին և ոչ հային: Մի առաջնորդողի մէջ (1871 թ. № 4<sup>1</sup>) որի վերնագիրն է «Մեր չքաւորութիւնը», և գրաւուած է Քիզիզից ու զարկուած թղթակցութեան առթիւ, կարդում ենք. «Միթէ միան Քիզիզումն ենք վրացիքս այսպիսի ննդ զրութեան մէջ ընկած: Ամեն տեղ, Քարթի, Խմէրէթի, Սամէզզէլոյի, Գուրիայի և այլն տեղեր, որտեղ որ կանք վրացիքս, ամեն տեղ յատկապէս գիւղացին աղքատ է և տնանիր Այս գիւղացին երբոց ամեն մէկը իր կարևաց չափ աշխատում է իր ոյժը և ջանքերը զործ գնել հողի, վաղի մշակութեան վրայ, բայց երեւում են այսպիսի անձնաւորութիւններ, որոնք առանց խղճանարուելու օգտուած են նրանց աշխատանքից: «Այսպէս է, շարունակում է նա, նաեւ լուսաւոր երկրներում, ինչպէս, օր. Անդրիայում, բայց այնտեղ կառավարութիւնը մշակում է աղքատ ժողովրդի օգտին օրէնքներ, հասարակութիւնը տմբն կողմից դրանց աջակեցում է. լուսաւորուածները հազար տեսակ միջոցներ են դանում աղքատ մշակների համար, իրանք մշակներն էլ մօտենում են իրար, կազմում են այլ և այլ ընկերութիւններ, աշխատում են միասին և ձեռք են մեկնում իրարա երկրորդ առաջնորդողի մէջ (1873 թ. № 11), որի տակ ստորագրուած է Ս. Մ. (Ս. Մեսիի) ասում է, որ—մեր գիւղացիների կաքերի կէսը յատկապէս կախէթում և Քարթիում վաճառականների մօտ գրաւ են և եթէ մի որեւ է միջոցի չը դիմենք, ամելողապէս կ'անցնեն նրանց ձեռքը, որ մեր վատ անտեսական դրութեան պատճառը միայն մեր կողմի վաճառականները չեն, բայց միեւնոյն ժամանակ Վրաստանի տնտեսապէս ընկնելուն պակաս չեն նպաստել նրանք, որ այսպիսի դրութեան դէմ միակ միջոցն է ժողովրդի լուսաւորութիւնը, ինքնաճանաշութիւնը, նրա աշխատանքի լաւ պայմանների մէջ գնելը, և այլն:—Այս երեւոյթի մասին խօսեց նաև Գ. Ակակի (1874 թ. № 450) և մեր ձեռքից մեծ կալուածների ընկնելու պատճառը վերագրեց մեր մշակութիւն չը գիտենալուն և աշխատանքից փախչելուն. «Այսպիսի զրութեան մէջ, եթէ հայերը իրար եղացրաբար ձեռք մեկնեն, օգնեն իրար և ոչ թէ իրանց սեփականը կրցնեն, այլ մեր կորցրածն էլ փըստան, միթէ զրա համար պիտի մեղագրենք նրանց: Նոյն հոգով է զրում (1870 թ. № 24—Գելլէտօն) նաեւ Գորիսիլի (Գ. Ծերեթնի) մեր «Փուչ ինքնասիրութիւնը» և փողերի անհաջիւ վատնելն է պատճառ, որ այսօր Քարթի—Կախէթի հող-կալուածքը հայոց ձեռքն է ընկած: Նոյն Գ. Ծերեթնին \*) զրում է

\*) Գ. Ծերեթնի մասին մենք կը խօսենք մի այլ անդամ: Ակատեղ կը նկատենք միայն, որ Գ. Ծերեթնին ընդհանրապէս պօլիտիկ—րօման-

իր մինք և մեր ժամանակի մէջ (Դր. 1879, № 13-16). մէս-  
թաղբենք որ այսօր մեր երկրում չը կայ հայը. հաւատացած  
պիտի լինենք որ նրանց տեղ կը լինէր վրացի փաճառականը,  
որ կը փառուէր ուզիդ այնպէս. ինչպէս այսօր փառում  
են հայ փաճառականները... Այսաեղ հայութիւնը մէջ ընթելու-  
չէ, առևտուրի կարգը մէկ է ամեն տեղ. Չարչինների գէմ մէկ  
միջոց կայ—ւմննը պիտի աջակցենք աշխատող ժողովրդին, շա-  
տացնենք բանկերը, հարկաւոր փողը զանենք նրանց համար.  
որպէսզի մի երկու բուրքու համար միկրոսնը իր ձեռքը չը գտի  
ամրողի տարուայ աշխատանքը և այնու Բալորովին ուզիդ է  
դասում «Երօէքրան», որ հայ փաճառականների գէմ պիտի  
կռուենք աշխատանքով, լուսաւորուելով, անտեսարար ուժե-  
զանալով և ոչ թէ աղազակներով և պոլիցիական միջոցներով.  
բայց նա պարզ ներկայացրած և պատկերացրած չունէր այն  
վասոց, որ առաջ էր զալիս և առաջ է զալիս այժմ մեզ  
համար ոչ միայն լուի փաճառականից, այլ նայ փաճառականից,  
եթէ ընդհանրապէս վնասարեր է և վատ, որ մեր զիւղացին ա-  
նարդարօրէն նեղուի չարչից, եւս առաւել վնասարեր ու կոր-  
ծանիչ է, որ մեր զիւղացու կայը. (Նաեւ աղնուական-իշխան-  
ների) օստ փաճառականի ձեռքը անցնի, քանի որ այդ գէպքում  
ազգի—մի մասի կարողութիւնը ոչ թէ անցնում է նրա միւս  
մասի ձեռքը, այլ բոլորսին կորչում է այդ ազգի համար Ով է  
մեղաւոր, կամ ում մեղքն է, հարցը դրանում չէ, եթէ ուզում  
էք իմանալ, այսաեղ երկու կողմն էլ մեղաւոր են Այն երեւոյ-  
թի համար, որի անունն է վաշխառութիւն կամ զիւղացուն  
վաշխառուից նեղուիլը, հարկաւոր է երկու էլէմենտ—վաշխա-  
ռու, չարչի—փող և ասպանք տուողը և ծախողը մի կողմից  
և փող ստացողը միւս կողմից. Այս հանգամանքում երկուն էլ  
մեղաւոր են Բայց բանը նրանում է որ երեւոյթը անսննիք  
լաւ և զգանք՝ թէ որքան նա վնասարեր է։ Մեր մեղքն է թէ  
ոչ այդ չը դիտենք, գիտենք միայն որ նեղուիլ կայ և նեղուած-  
ները մենք ենք «Երօէքրան» չէր տեսնում, չէր տեսնում ոկրպ-  
րում (յետոյ տեսաւ), որ մեր լուսաւորութիւնը առաջ չէր զնում  
ուզիդ ճամբով, քանի որ փաճառականութիւնը և արհեստները  
այլ ազգի ձեռքին է։ Այսաեղ չը պիտի լինի որևէ է ատելու-

---

տիկ էր, ոգում էր տեսնել ան, ինչ որ ցանկալի էր և ինչ որ գո-  
յութիւն չանեւր Սրանավ մենք չենք ուզում տուուր զցել հանգուցեալ  
զրողի և հասարակական զրծիչի անուան վրայ Ով որ փոքր ինչ զոնէ  
բամանիկ չէ, նա ոչինչի չի հասառում, Գ. Ներեթելու զիւաւը արժա-  
նաւորութիւններից մէկը ան էր, որ որպէս կողևալիստ խորացէս հաս-  
տում էր բարեկա ապազալին։

թիւն կամ չե հասկացած թշնամութիւն, այլազգի վերաբեր-  
մամբ, թէկուղ նա լինի հայ կամ թաթար: Մեզ համար վեա-  
սարեր է որ Քարթլ-Կախէթի գիւղերի և քաղաքների մէջ վա-  
ճառականներն օտար տոհմերից են և այսպիսի դրութիւնը պիտի  
հեռացնենք մեր զլիխց: Միթէ նրան հակառակ կը լինի մէկը:

Բայց միթէ տեսաւ «Դիրօէբան» որ հայ վաճառականների  
լուսաւորութիւնը վատ էր մեզ համար, որ մեր ձեռքից կա-  
լուածների հեռանալը և հայ վաճառականի ձեռք անցնե-  
լը, որ առաջ չարչի էր և վաշխառու, յետոյ վաճառական,  
արհեստաւոր, արտադրող և որ յետոյ փոխուեց, և զարձեալ պի-  
տի փոխուի եւրոպական բուրժուազիայի, միթէ այս բոլորը  
նման չէ այն առածին «ընկաւ թիքէն՝ էր ամանի մէջ»:

Վերին աստիճանի հետաքրքիր է հայ զրողների կարծիքը  
այս երեւոյթի մասին: Անա թէ ինչ էր գրում «Մշակը» 1873  
թ. («Դիրօէբան» 1873 թ. № 23). «Մինք յաճախ լսում ենք զան-  
գատ, որ տոկոսով փող տուող հայր շատ է նեղում և աղքա-  
տացնում զիւղացիներին, ինչպէս վրացի, նոյնպէս էլ հայ»:  
Այս հարցի մասին միշտ տպում են յօդուածներ, նաևմակներ և  
մանր մունք լուրեր ինչպէս «Մշակի», նոյնպէս և վրաց «Դիրօէ-  
բանի մէջ, երկու լրագիրն էլ տնտեսական տեսակէտից էին  
նայում այս ցաւալի երեւոյթի վրաց: Զէր էլ կարելի այս երե-  
ւոյթը այլ տեսակէտով քննել, ծնչող, առկասով փող տուողներ  
ամեն տեղ էլ կան: Հայերի մէջ այս բնութեան հակառակ գոր-  
ծին շատերը չեն հետեւում: Կովկասի մէջ ապրում են բաւա-  
կան թուով աշխատանք սիրող և արհեստաւոր հայեր, Որովհե-  
տեւ մի քանի հայեր սկսել են ժողովրդին աղքատացնող այս  
գործը, հաւատացուծ ենք որ ամբողջ հայութեան ոչ ոք չի վա-  
տարանելու, «Բնայց այս մէկը հարցնենք, կարող է արդեօք այս  
բանը հասկանալ հասարակ ժողովուրդը, նեղուած, աղքատ, տղէտ  
և աշխատասէր զիւղացին, Քերթողին զիւղացին իր երկիւղալի  
թշնամին է համարում. իր այս թշնամին մեծ մասամբ լինում  
է հայ վաճառականը: Այսպիսով փող տոկոսով տուողը միշտ  
հայն է... Այստեղից վրացի զիւղացին համոզւում է որ ամբողջ  
հայ ազգը բաղկացած է նրա պարտատէրի նման մարդ-  
կանցից... Մեր հայրենակիցներից մի քանիսը իրանց կեղե-  
քիչ վարմունքով ոչ միայն հեռացնում են մեղանից վրաց  
զիւղացու ժողովրդի համակրութիւնը, այլ և ծնեցնում են նրա  
մէջ բոլորովին հակառակ զգացմունք: Այս մարդիկ վրաց ժողո-  
վրդի սրտի մէջ ցանում են թշնամական վերաբերմունք դէպի  
հայ ժողովուրդ, այն ժամանակը երբ այդ երկու ժողովուրդը ու-  
նի ընդհանուր շահեր: Ի վերջոյ լրացիրը բերում, է այն հա-

իսրի կարծիքը որոնք առաջ են—ոչ է մեզաւոր, որ այն տագավուրդները որոնց մէջ ապրում են հայերը, նրանքից թոյլ են, ծոյլ են, անսպէս որ հաշտութեամբ կեզդերում են հայերից, — բերելով այս կարծիքը հարցնում է, ունայց միթէ զա ուզիզ է, միթէ խելոք մարդու և ընզունակ ժողովրդին վայել է իր ընդունակութիւնը և ոյքը ի շարք զոր դնելու:

Պարզ է, որ ԵՄՀակից վերին ասախճանի միակողմանի է նայում զործին: Այսուղ միայն մի քանի հայեր չեն զործում, այսանդ միայն անտեսական հարց չէ, այլ այսանդ ազգային հարց է անտեսական հարցի վրայ <sup>\*)</sup>:

<sup>\*)</sup> Յաջուածի այս մասն էր տագան զետ, բայց „Նմիրիան“ չը տպակելով Նրա մերժանալուն բայտարարից, որ „Դրակրայից“ առաջ էլ վեց գրականութեան մէջ խօսքեր լինում էին հայոց մասին: „Մէկ ցոյց ուուէր“ հարցնում է նրան մնարին առցցելիք: Ա 1833 թուր պիտույքի մէջ, որ Խմբագիրներն էին զրում հայելի մասին և այն էլ ուս զրում Մինչեւ: „Դրակրան“ զայտիթին ունէր՝ „Խարարմիւս զազեթի“ (Քառասունի լրագիր) 1817-20 թուակ: Այժմ այդ լրագրից մնացել է միայն մի համար, որը իր մէջ պարունակում է բայտարարաթիւններ, տեղեկաթիւններ և այլու մեծի մասին և մանր լուրեր): „Խարթուի զազեթի“ (վրացերէն լրագիր) (1820-1821 թ. լրագրից զիստարապէս նշանակուած էր պաշտօնական կարգադրութիւնների համար), Տփիլիսիս նագերանի («Գեֆաևսկի ենձուութ») (1830 թուակ) մինչեւ մեզ հասել է տասնիցը համարը Դուրս էր զայիս շարամը մի անգամ, ուզում էր ձին լիզուով, „Խախարօրելին“ (Անտոնիք), որս մասին պինչ չը գիտենք (այս տեղեկութիւններ հանուած են՝ Խմբիրիանին աշխատակից Գր. Ակիշիձի բրաչիցից «Պերօնաց, ուշակ» 1901):

Խնդրամ ենք բարգելի լրացրին առել այս հաստարակութիւններից ո՞րի մէջն էր զրում հայերի մասին ևամ զուցէ յաս էր զրում հայերի մասին զիւգաւունեական լրացրի «Դամնիս Նեղան» (զութիսի մայր, 1861-1876 թ.) կամ „Խարարմիւս մասրէ“ (Վետանի Գրաւն-1863 թ.) այս ժուրնալի մէջ մնաք հանցխացեցինք ն. Օքրոմճեղլիշիլու մի նամակի հաւ լիզուի և լրաւարարթեան բառաջադրման մասին, որի մէջ միայն լուրզանք է արտարարուած զէպի հայերը, կամ զուցէ „Խախարին“ մէջ (Արշալու-1852-75 թ.), որ զիստարապէս զրական մասից և լաճակ միայն թարգմանութիւններից էր կազմուած: „Խախարի մէջ կատ մի նամակ հայերի կամ ինչպէս „Խախարին“ է առած մեր եղբարտուկցներին պատճենթեան մասին, լարզանքով զրուած, կամ զուցէ „Խարարմ. Սառալիներո մախարօրելին“ էր (Արաստանի հոգեւոր անտոնիք) մի բան զրու հայերի մասին:

Մենք սպասում ենք փորձուած և զիստով լրացրի պատճեններն, բայց առաջուց էլ զիստներ լրացրի պատճեններ, ալնուս, ինչողեւ զիստներ որ ծերացած անվերիանները՝ չը զիտեն որ զիստներ ժուած և պիտույք չէ, որ պարբերական մամուլի համար անօպայման հարկաւոր է բաղաւական էլեմենտու Արագևս էր միայն „Դրակրային“ մէջ և այլ լրացրից է սկսում վրաց պարբերական մամուլը:

ինչպէս յայտնի է, քաղաքային ինքնավարութիւնը մըտցրին մեղանում 1874 թուին, Մինչեւ այդ ժամանակ մի քանի տարի գոյութիւն ունեին հին համայնական կարգեր, Ամեն մի համայնք և ամեն մի դասակարգ ընտրում էր իր ներկայացուցիչն: Այդ դասակարգերը գործերից մի քանիսը վարում էին ջոկ-ջոկ, իսկ մի քանիսը միասին, 1866 թուին թիֆլիսում տեղի ունեցաւ այս ձեւի ընտրութիւնները, առաջին դասակարգի՝ այսինքն ժառանգական ազնուականների ներկայացուցիչներ, ընտրուեցած մեծ մասամբ վրացիք. երկրորդ դասակարգի (անձնական-ազնուական) և ժառանգական պատուաւոր քաղաքացի) ներկայացուցիչներից միայն երկուս թէ երեքը վրացիք էին, երրորդ դասակարգի (մոքալարի-անձնական պատուաւոր քաղաքացի) ներկայացուցիչներից ոչ մէկը վրացի չէր. Զէր ընտրուած վրացի նաև չորրորդ դասակարգի (թիֆլիսի բնակիչներ, որոնք չունեին անշարժ կազք, բայց առեւտուր էին անում կամ արհեստաւոր էին) ներկայացուցիչների մէջ Պիտի նկատենք և այն, որ ամեն մի դասակարգ ընտրում էր իր կողմից 25 ներկայացուցիչ, Քաղաքագլուխ ընտրուեց նոյնպէս հայ:

1870 թուի քաղաքային կանոնադրութեան զօրութեամբ ընտրողները ձայնաւոր էին ընտրում երեք տեսակ. թիֆլիսում ամեն մի տեսակը ընտրում էր 24 ձայնաւոր. 1874 թուին թիֆլիսում՝ քաղաքային ընտրութիւնների առաջին կարգում ընտրուեցան միայն երեք վրացի (ընդամենը ներկայ էին 32 ընտրողներ), երկրորդ կարգում 2 վրացի (ներկայ էին 150 ընտրողներ), երրորդ կարգում—2 վրացի (350 ընտրողներ): Թեհենածուներ էին քաղաքագլխի համար՝ թումանօվ, Խանջինել և Մամացօվ: Ծնարուեց առաջինը: 1875 թուին թումանօվի տեղը ընտրուեց Դմիտրի Ղիփիանից (սրա հակառակորդների թեկնածուն էր երեմեա Արծրունին): 1878 թուին առաջին կարգից ընտրուեց մի վրացի, 3—4 այլազգից, մնացածը հայեր էին (ընդամենը ներկայ էին 32 ընտրողներ). երկրորդ կարգից—3 վրացի, 3 այլազգից, մնացածը հայ (ներկայ էին 57 ընտրողներ), երրորդ կարգից—6 վրացի, մնացածը հայեր էին: Քաղաքագլխութեան թեկնածուներն էին՝ Դ. Ղիփիանի, Բէհրութօվ, Խօջամինասօվ, Զուբրալօվ, Թամամչել և Ղորզանօվ: Ծնարեցին Ղորզանօվին, բայց երբոր նա հրաժարուեց, նրա տեղը ընտրուեց Մատինօվ:

1883 թուին առաջին կարգից ընտրուեցին 2 վրացի, 2-ը այլազգից, մնացածը հայ էին (ներկայ էին ընդամենը 31 ընտրող), երկրորդ կարգից—3 վրացի, 4-ը այլազգից մնա-

Տածը հայ (Ներկայ էին 96 ընտրողներ), նրանուց հարցից և վրացի —2-ը այլպզից, մասնաւոր հայ՝ Քաղաքագլուխ ընտրեցին թուժանային:

Այսպիսի ընտրութիւններ տեղի ունեցան Շերօքառի գոյութեան ժամանակի Խոչչպէս էր նայում լրազիրը այս ընտրութիւններին 1866 թուժականի գուցէ սաստիկ սահմանափակուած քաղաքային ինքնափառութիւնը ոչ ոքին չէր հետաքրքրուած և ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնուած թէ ընտրուսը ով կը լինէր՝ վրացի, հայ թէ ուրիշը Հայերը շատ էին և ընտրում էին ինքն ըստ ներեան իրանցից, հեռու մնալով ամսն տեսակ այս- լիտիկայից Շերօքառն ոչինչ չի առաւ։

Բոլորովին այլ են 1874 թուի ընտրութիւնները Բացուեցաւ գործունէութեան լայն ասպարէջու Ամանց պատուափրութիւնն էր զրաւում զէպի այս ասպարէզը, ոմանց էլ հասորակական գործունէութիւնը Վրացիք էլ ցանկացան քաղաքի ինքնափառութեան մէջ մասն ունենալ, մօս եկան, բայց տեսան որ հայերը, որոնք վրացերէն էին խօսում և որոնք տուած նայում էին հայերի վրայ, ինչպէս իրանց եզրայիների և իրանց զլուխը կիսով չափ վրացի էին համարում, —զարձեալ աւելի (գուցէ ակամայ) իւրայինների կողմը բանեցին, ընտրեցին հայերին, սեւացնելով վրացիններին։

Վրացիութիւնը շատ տիրեց հայերի վարմունքից, նա մասնաւանդ այն սղամառուվ, որ վրացիք այդ բանին չէին սպասում և Մեր քաղաքում մոզ սեւացրինս, ասում էին Նրանք զառնութեամբ և կամայ ակամայ ուշազրութիւն էին զարձնում իրանց զրութեան վրայ։ Տեսան որ միայն «Զմինորա» (մերուձերութիւն) բաւական չէ, այլ և հարկաւոր է ոս ամրացնելու համար նիւթական հիւմք (հող), Հարկաւոր էր որ վրացիք շատ լինէին և նիւթականապէս ապահովուած Թիֆլիսում Տեսան, որ Թիֆլիսը՝ անունով վրացիններին է, բայց իրազէս նա ուրիշին է Ս. Մեսիխին հետևեալ մելանխոլիական նամակին է զրում ընտրութիւններից յետոյ («Երա» 1874 թ. Խ 29—Նոյեմբերի), «Որքան էլ տիրելու լինի իսլական վրացին (եթէ միայն մի տեղ կարելի լինի գանել «իսլական վրացուն», —ինչքան էլ տիրելիս լինի, բայց և այնպէս պէտք է խոստովանած, որ մի ժամանակ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը—այսօր զարձել է հայերի սեփականութիւնն Այսօրուայ Թիֆլիսի բնակիչների կէսը հայերն են։ Վաճառականութիւնը, առեւտուրը նրանց ձեռքին է, քաղաքի հողը նրանցն է, այդ հողի վրայ կառուցած շինքերն էլ համարեա բոլորն էլ հայերինն են։ Գուցէ պատահէք մի տեղ մէկ կամ մի քանի խմբելի կամ մինզրելի և այն էլ

ծառայողների, մանրավաճառների կամ տան տէրերի մէջ, թէ չէ մնացած վաճառականութիւնը և «մեր» քաղաքի կարողութիւնը բոլորը հայերի ձեռքին է»:

«Մի խօսքով հայերը, բաւականին ուժեղ ճանկերով են կպել քաղաքին և, առայժմ տէր են և գարում են նրա բոլոր գործերը: Եթէ այս երեւոյթը ի նկատի ունենանք, այն ժամանակ լաւ կը ըմբռնենք, թէ ում պէտք է ընտրէր քաղաքը իր գործերը վարելու և կարգադրելու համար: 72 քաղաքային դեպուտատների մէջ միայն երեքը թէ չորսը վրացի են, կարծեմ մէկ թէ երկուուր—ուստի մէկն էլ գերմանացի, մնացածը—բոլորը հայեր են: Այս երեւոյթը շատ հեշտ հասկանալի է: Մասր և խոչշոր վաճառականները, շատ թէ քիչ հարկ վճարողները, բոլորը հայեր են եւ նոքա ել իրանց ծանօթ եղբայր մարդկանց, իրանց հաւատակից եւ արհեստակից մարդկանց ընտրեցին քաղաքային խորհրդում իրաւասու՝ իրանց շահերը պաշտպանելու համար: Սրա մէջ ոչինչ զարմանալու բան չը կայ: Բայց այս ընտրութիւնների հետևանքը, կարծեմ արմէ, որ նրա մասին վրացի մարդը փոքր ինչ մտածէ»... Այն ինչ ընտրութիւններից առաջ Ս. Մեսիխն միայն խորհուրդ էր տալիս ընտրողներին ընտրել այնպիսի մարդկանց, որոնց հետաքրքրեցնում է հասարակական գործը և որոնց սիրտը ցաւում է հասարակական բարեկեցութեան համար \*), կը նշանակէ, որ բաւական չէ՝ որ միայն լամարդիկ ընտրուին, այլ և հարկաւոր են լաւ վրացիներ: Մենք վերեւ ընդդեցինք Ս. Մեսիխի մէկ զարձուածքը որտեղ նա ասում էր՝ թէ բոլորովին մնական էր որ հայերը իրայիններին ընտրեցին: Սա ուշադրութեան արժանի է, նամանաւանդ, որ այն ժամանակ գեռ եւս լրագիրները չէին ստեղծել «հայ-վրացական հարցը», ինչպէս կարծում են այդ մի քանիսը: Հայերը ղեկավարում էին (այնպէս, ինչպէս վրացիք) բնական ազգային զգացմունքներով: Այս բնականորէն իրար ձգտնն է մեր և հայերի ընդհարման, այն առաջին աղբիւրը, որին դժբախտաբար չեն նկատում շատերը:

Ամենից շատ բարկացրին հայերը Ակակիխն, որը հետեւ և առ սուր խօսքերը զրեց նրանց հասցէին. («Դր» 1875 № 7) «... Այս խօսքերով մենք այն ենք ապացուցանում, որ եթէ մենք՝

\*). „Խշակ“ն էլ խորհուրդ էր տալիս լատկապէս երրորդ կարգի ընտրողներին, պատր չքաւոր էք, ասում էր նա, ընտրեցէք ձեր միջից այնպիսիններին, որոնք մտնեն ձեր դրութեան մէջ»:

Վրացիքու մեր անշնորհութեան և անփաթութեան շարքի կորչնելու լինանք մի բան, առելի լաւ է, որ այդ կորուսու էի մեր կղզայրակից հայերը ձեռք դնեն և ոչ թէ առարծները, բայց սրանով տաել չէի ուզում որ հայերը կապեն մեր ձեռն ու ուզը, շարժուելու կարողութիւն չը տան, մինչեւ մեր բերանեց խթն մեր պատասր Բայց դժբախտաբար հայերի կողմից այս վերջին գործողութիւնը երեւան է դայիս կամաց-կամաց... Այս և պրակացութեանը հասցրեց մեզ քաղաքային վարչութիւնը, որ նոյն հայութիւնն է Հաւատացած պիտի լինեն ամենքը, որ վրացին, թէ կուզ նա հանձար լինի, չի արժանանայ զիսաւորութեան քաղաքային վարչութեան մէջ, Առզիզ է, երբեմն քաղաքային վարչութեան մէջ պատասխամ են և վրացիք իրեւ անզամենք, բայց Երանց ձայնը այսպէս է կորչում հայերի մհծամանութեան մէջ, ինչպէս կաթիլը ճահճի մէջ... և հարկէ, հայերը ձեռք կը մեխնեն իրար, որա զիմ ոչինչ ասելիք չունենք, բայց միայն այն կը պահանջնենք, որ քաղաքի վարչութիւնը մեզ նեղացնելու քայլեր չանէն:

Սրանից յետոյ հեղինակը պատմած ունի այն լուրը, թէ ինչպէս քաղաքի վարչութիւնը միւ-մի սուրբի հարկ է նշանակել մշակների վրայ, (որոնք համարեա վրացիք և իմերեկներ են) թէ ինչպէս կապալով է տուել այդ հարկը, թէ ինչպիսի անարդարութիւններ են տեղի ունենում այդ հարկի տաթիւ, թէ ինչպէս կալանաւորում են մեղաւորին և անմեղին և յանձախ երկրորդ անգամ վճարել են տալիս այդ հարկը:

«Մշակը» այս նամակը ընդունեց իրեւ հայերի անորոշութիւն և նեղացաւ, որին պ. Ակակին պատասխանեց՝ «Երեւում է, որ «Մշակը» ամբողջ ազգի տեղն է ընդունում քաղաքի այն հայերին, որոնց մենք անպատճեցինք. Կթէ այսպէս է, երեւում է որ հայերը լաւ չեն հասկանում ազգութիւն տառ բանը և զարմանում ենք, որ սրանից յետոյ ինչպէս է տառ մեզ՝ թէ որ տեղ է բարեկամութիւնը. միացած ոյժով յառաջադիմութիւնը և այն... «Մշակը» կոտրուել է, որ ինքն էլ իր կողմից անբաւական է քաղաքային վարչութիւնից և նրան համակրող հայերից, սա նշանակում է, որ նա չի հաւանում նրանց վարմունքը, իսկ եթէ չի հաւանում, ինչու է պաշտպան կանգնում նրանց... Կրկնում ենք, որ այն հայերը, որոնց հետ տիրում ենք և ուրախանում և պատրաստ ենք և ապագայումն էլ մասնակից անել նրանց, Թիֆլիսի հայերից բալորովին տարբեր ցեղից են և կը լինեն Մենք նրանց մէջ չենք տեսնում իսկական հայ ուղղու Պօէտը (իմա Ակակի) ամեն մի երեւոյթը ներկայացնում է իրան պարզ, լուսարանուած ամեն կողմից իր ամրող զէմբովի եթէ

առաջ պ. Ակակին սկզբունքով էր նայում երեւոյթին և եղբայրութիւն էր տեսնում և հիմա, երբ տեսաւ վրացիների նուաստացում, կարեց իր բոլոր յարաբերութիւնները թիֆլիսի բոլոր հայերի հետ:

Եկատ. 1878 թուի ընտրութիւնների օրը և «Դրօւրա»ն առաջուայ նման խորհուրդ տուեց թիֆլիսցիներին՝ օգտուեն անցած չորս տարուայ ձայնաւորներից և բաղաքային վարչութիւնից անբաւական լինելուց, աշխատեն ընտրել այնպիսի մարդկանց, որոնց սիրու ցաւում է հասարակական գործունէութեան համար, (№ 254): Առաջին և երկրորդ կարգի ընտրութիւններից անբաւական լրագիրը, նոյն տեսակ խորհուրդ է տալիս երրորդ կարգի ընտրողներին, աղջայնութիւնն ի նկատի միք առնի, ասում է նա, այլ ընտրելէք այնպիսիներին, որոնք կը մտածեն ձեր օգտի և բարեկեցութեան համար: Երրորդ կարգի ընտրութիւններն էլ չարդարացրին վրացիների յոյսը: Դեռ առաջ, ընտրութիւնների ժամանակ, պ. Ակակին հարց տուաւ հայոց լրագիրներին թէ ինչ կ'ասեն նրանք, եթէ Պետերբուրգում ձայնաւորներ ընտրուեն միայն գերմանացիներ, Վարշաւայում —միայն հրէաներ, իսկ թիֆլիսում մի վրացի էլ չընտրուի: Սրա պատասխանը գտաւ միայն «Մշակի» խմբագիրը, որին իր կողմից պ. Ակակին պատասխանեց՝ նախ իշում է այն, որ վրացիները հաւատ ընծայեցին և երիտասարդ հայերի կողմը բռնեցին, բայց երբ գործի անցան, թէպէտ նրանք սեւացրին հարուստ հայերին, բայց նոյն վիճակի ենթարկելին և վրացիներին, Յետոյ գառնում է ուղղակի պատասխանին և ասում՝ մենք համոզուած ենք, որ «Մշակ» պատասխանը չի կազմում ամբողջ հայերիտասարդութեան կարծիքը, նաև մանաւանդ որ այդ պատասխանը էղօխտական է, անարդար և անհեռատես: Պ. Ակակին գծոն է հայ լրագրից: Առաջ վաճառականների հայութիւնը ուրանում էիր, ասում է նա «Մշակին», այն ինչ հիմա աղաղակում ես, թէ գրանք են խիշական հայ աղդը, նրանք ոչ մի ընդհանուր բան, տառւ ես դու, չը պիտի ունենան վրացիների հետ քաղաքում, քանի որ թիֆլիսը այսօր հայերինն է...»

Այսպիսի ոճը սովորական է այսօր հայ-վրացական յարաբերութիւնների մէջ: Կասի որեւ է հայ կամ վրացի մի խօսք միութեան մասին—նա մեզ գուր է գալիս և մենք զէպ այդ միութիւնն ենք ծգուում: Բայց հաւատ չունենք գէպի միւնաց և մեզ համար լաւ չենք պարզել, թէ ինչի մէջ պէտք է կայանայ այդ միութիւնը: Երբեմն միութեան քարոզիչը այնպիսի բան է պահանջում դիմացինի կողմից, որ բնաւ չի տանում զէպի միութիւնը: Այս բանը ապացուցանում է էլի մի

անդամ որ մեր անհամաձայնութեան հարցը լուրջ երևոյթ է, «Դրուերա» և «Մշակը» շատ մօտ էին իրար. Ա. Մեսիխն համարեա բարեկամ էր Մշակի խմբագիր Արծրունու հետ, բայց երբ որ նրանց լրազիրները մեր միութեան համար ընդհարում էին իրար հետ, լինում էր այնպէս, որ իրանց պակասութիւններն էլ պաշապանում էին:

Վերև բերած պ. Ակակիի նամակը վերջանում է հետեւ՝ եալ խօսքերով. «Մնաք մեր կողմից նրանց (արհեստաւորներին) զնանառում ենք և որչափ մեր զոված վաճառականին ենք առում, նոյնչափ եւս սիրում ենք արհեստաւորին, ինչ ազգի էլ նա պատկանելիս լինի» Այսօր ամեն մի հեղուած զիմում է ժողովրդին զանգաւառի Դէմօկրատիական ժամանակը յանախ զիմում էր ժողովրդին, բայց զրանով այնուամենայնիւ նա չը զռնացրաւ նրա ազգայնական շանկութիւնը Պարզ է, որ սրա պատճառը այն է, որ մեզանում արհեստաւորները և աշխատազ դասակարգը զեռ եւս ոչ մի նկատելի ազգեցութիւն չունեն կեանքի վրայ Թէպէտ երրէք չը սիրի մոտենք թէ որեւ է ժողովուրդը կը լինի ոչ ազգայնական Որպէս զի մնանում վերջ դրուի ազգայնական անհամաձայնութեան, սրա համար հարկաւոր են շատ ձեռնուու պայմաններ, Բայց որբան գէմուկրատիական կը դառնայ մեր կեանքը, այնքան աւելի արգարութիւն կը մտցնուի այդ ազգայնական անհամաձայնութիւնների մէջ... 1883 թուի ընտրութիւններին «Դրուերա» միայն մի յօդուած նույիրեց Ա. Մեսիխն այլ եւս կենզանի չեր Յօդուածը տպուած է առաջին և երկրորդ կարգի ընտրութիւններից յետոյ, որոնց ժամանակ ընտրուեցան միայն 5 վրացի:

Առաջուց արգէն ունէին ժողովները կարդում ենք այս յօդուածում, ունէին խօսակցութիւններ, առաջուց քարոզում էին և կազմում ցուցակներ, Մի քանի առները մինչեւ անզամ ցոյց էին տալիս անկազմականութիւն և վրացիների մէջ էլ փնտուում էին ձայնաւորների համար թեկնածուներ Յետոյ եկաւ բուէ տալու ժամանակը... (ընտրեցին 2 վրացի), այն սիրի կուսակցութիւնների բաժանուեցին, որ այլապէս չեր կարելի. սպասեցէք մինչեւ երկրորդ կարգի ընտրութիւնները... (ընտրեցին 3 վրացի). Այսպիսով 48 ձայնաւորից ընտրեցին միայն 5 վրացու, 6 ուստ և այլ ազգի Առաջիկայ կիրակին երրորդ կարգի ընտրութիւններն են, բայց չենք կարծում որ այն ժամանակ էլ 4—5 մարդուց աւելի ընտրեն այլազգից Ռւշազրութեան արժանի է այս երեւոյթը Ուզիդ է վրացիները Վրաստանի մայրաքաղաքում թուով քիչ են հակերից, բայց վրացի, ուստ և ուրիշ ազգի մարդիանց որ զումարենք հայե-

թից երկ ոչ շատ, պակաս էլ չի լինի. Եւ եթէ հայերը ընտրում են աւելի մեծ թուով ձայնաւորներ սրա պատճառը այն է, որ նրանք ցեղն ունեն, միմանց պահել գիտեն, ունեն կազմակերպութիւն և միասին են բոլոր հասարակական գործերում: Քաղաքի վրացիների շահերը պահանջում են որ լուսաւորուած, առաջաւոր և պատուական վրացիք էլ տեղ և մասնակցութիւն ունենան քաղաքային գործավարութեան մէջ: Այս պատճառով հարկաւոր է որ մենք էլ այնպէս վարուենք, ինչպէս որ վարում են հայերը՝ ձեռք բերենք ցեղն և հարկաւոր դէպքում գործենք միասին եղբայրաբար, պահենք իրար: («Դր.» 1881 Տ. 241).

Քաղաքային ինքնավարութիւնը բաւականին մեծ ծառայութիւն մատուցեց մեզ մեր ինքնածանաչութեան գործում: Աւելի և աւելի ուշադրութիւն ենք դարձնում մեր թուլութեան, մեր պակասութիւնների վրայ: Ամեն մի պարտութիւն մեզ սթափեցնում է և չենք կարծում որ մի ուրիշ բան այնպէս նպաստ է մեր հասարակական աճման, ինչպէս քաղաքային ընտրութիւնների մրցումն: Վրացիք ամենից առաջ այստեղ, թիֆլիսի ինքնավարութեան մէջ, ինչպէս հայելիում, տեսան իրանց յետամացութիւնը, անհիմ լինելը, տեսան որ հայերը աւելի համերախութիւն են ցայց տալիս քան վրացիները, թէպէտ ապրում են Վրաստանում և վրացերէն էլ խօսում են: Վերեւ բերած յօդուածի մէջ ամենից աւելի ուշադրութեան արժանին այն է, որ այստեղ մենք առաջին անգամն ենք տեսնում վրացինների այն ցանկութիւնը որպէս զի միանան ուրիշների հետ ընդդէմ իրանց նախկին եղբայրակից հայերի, ինչ որ, ի հարկէ, երկու կողմի համար էլ պիտի համարել ցաւալի երեւոյթ: Պարզ է և այն որ սրա մէջ աւելի մեծ մեղք ունեն հայերը, քան վրացինները: Այսպէս կը վարուէին բոլորը: Այսպէս են վարում նաեւ հայերը: Հայերը թուով շատ են թիֆլիսում, աւելի շատ էլ կարսղութիւն ունեն: Այս պատճառով էլ աւելի մեծ ոյժ ունեն ընարութիւնների ժամանակ: Այս ոյժը նրանք ամբողջապէս իրանց օգտին ծառայեցրին և նայեցին վրացինների վրայ ոչ որպէս թոյլ եղբայրակիցների, այլ որպէս օսարների վրայ: Հայերը ընտրում էին իւրայիններին և վրացիններին թողնում էին այնքան իրաւունքներ, որքան տուել է նրանց և օրենքը: Ոչ բարոյական ոչ էլ պատմական իրաւունքը ի նկատի չի առնուել: Հայերը վարւում էին այնպէս ինչպէս վարւում է ամեն մի առփորական մարդ, որը չի զեկավարւում իր կեանքի մէջ այս պատճաններով: Մեր բարոյական իրաւունքը այն է, որպէս զի մեզ տան այնքան ձայնաւոր, որքան կանք թուով թիֆլիսում

(և ոչ այնքան ձայնաւոր, որքան կարողութիւն ունենք): Մեր պատմական իրաւունքը այն է, որ թիֆլիսը մենք պաշտպանել ենք արիւնով և ծառայութիւն ենք մատուցել թէ այս քաղաքին և թէ քաղաքացիներին Մենք կարող ենք միշտ դիմու հայերի բարոյականին, պահանջել արդարութիւն և ոչ միայն օրէնք, բայց դրանով, ի հարկէ, ոչինչ չենք օգտուի այսօր: Այսօր մեր ոյժը մեր բազմանալու, անտեսականապէս ուժեղանալու մէջն է թիֆլիսում: Այն ժամանակ հայերը կը յարգեն մեր իրաւունքը ները և մենք էլ անրաւական չենք լինի նրանցից \*):

Հազիւ կը պատահի մեզանում մի այնպիսի հայ որ վրացերէն փրանայր: Մեր հայերից մի քանիսը զիտեն վրացերէն, բայց չը զիտեն հայերէն Այսպէս էր և այսպէս է այսօր էլ զիւղերում, այն ինչ քաղաքներում հիմա պատահում են այնպիսի հայեր, որոնք ամաչում են զիտենալ վրացերէն լեզուն: Հայերի մէջ այսօր մեծ ազիտացիա կայ, որպէս զի ամեն մի հայ անպատճառ զիտենայ մայրենի լեզու Այս ազիտացիային բնականարար հետեւում է բեակցիա ընդդէմ վրաց լեզուի, որը մինչեւ վերջերս տիրապետող լեզուն էր հայերի մէջ:

Նատ ցանկալի է որ կովկասեան ազգութիւնները խմանան միմեանց լեզուները կա է որ հայերը զիտեն վրացերէն (այս պի զիտենանք մենք էլ և հայերէնը), բայց վաս է և սպասարակելի որ վրացերէն լեզուի միջոցաւ հային մոռացնել տանք իր մայրենի լեզուն և աշխատենք նրան վրացիացների Ով այսպէս կը վարուի, նա ձեռք տուած կը լինի ազգային անկախութեան սկզբունքին և ով չի յարգում ուրիշին, նա չի կարող և իր համար պատիւ պահանջել ուրիշներից: Մենք ամաչում ենք, երբ գողանում ենք մի որեւ է մասնաւոր մարդի ամենափոքր սեփականութիւնը և կամ սահմանափակում ենք նրա իրաւունքները, իսկ միթէ իրրեւ ճշմարտութիւն պիտի ընդունենք և այն եթէ խենք որեւ է ազգի զաւակներին, սահմանափակենք նրա դործունչութեան ասպարէզը և կամ թուլացնենք: Միթէ պիտի յարգենք անձնական իրաւունքները, իսկ ազգային իրաւունքները չը յարգենք: Ոչ Ազգային անձնունմիտելութիւն պիտի մեր սրբութիւն սրբոցը լինի: Թող հայը խօսի վրացերէն, վրացին հայերէն և կամ այլ լեզուով, բայց թող այդ բանը իրրեւ զէնք չը ծառայի նրանց այլասեռման Զը նմանուենք և բռպային այն բանում, ինչ որ վայրենի է և բանի:

Դժբախտարար «Դրօէբարի մէջ կը հանդիպէք այնպիսի

\* ) „Ցուրի Պուրցելի“ № 1897.

15 ազգային 1902 թ.

պրետնզիաների՝ թէ հայերը անպայման պիտի գիտենան վրացերէն և այս վրացերէն լեզուն վրացերէն սիրտ պիտի դնի նրանց մէջ։ Երագիրը համարեա նեղանում է որ հայերը վրացերէնի փոխարէն աշխատում են սովորել հայոց լեզուն։ Աւզիդ է, այս բանը այսպէս պարզ չէ արտայայտուած, բայց զրելու ոճը պարզ ցոյց է տալիս այդ։ 1870 թ. № 14-ում արտատպած է «Կաւկազից» այն լուրը, որ Դուչէթի հայոց ուսումնարանում վրացերէն չեն սովորեցնում, թէպէտ երեխանների համար նա կազմում է մայրէնի լեզու։ Այս լուրին լրագիրը իր կողմից աւելացնում է. «Հայոց եկեղեցական ուսումնարաններում վրացերէնը չէ աւանդուում ոչ մի տեղ և այնպէս է արտաքսուած այն-առեղերից, որ կարծես թէ նա անիծած լինի, Այն ինչ այն բանին չեն մտիկ անում, թէ նա կեանքի մէջ հարկաւոր է թէ ոչ։ 1873 (№ 31) Գորուց զրում են. «Գորու հայոց օրիորդաց ուսումնարանում վրացերէն բոլորովին չեն սովորեցնում, ժողովուրդը վրացերէնից զատ ոչինչ չի իմանում, ուրեմն սկզբնական կրթութիւնը երեխաններին տալիս են այն լեզուով, որով նա ինչի<sup>\*</sup>—էլ չը զիտէ։ Զը զիտենք, ուղիղն ասած, որ մեծ դեպուտատը կամ մի այլ ոք երկար որոնելուց յետոյ գտել է որ Գորու ընալիչների (հայերի) մայրէնի լեզուն հայերէնն է։» Վրացերէնը որ սովորեցնելիս լինեն, այն ժամանակ վրացիք էլ կը յաճախեն ուսումնարան, «բայց էլ ինչպէս կ'ասեն, թէ մենք հայեր ենք, իսկ նրանք վրացիք»։ —Մինչեւ անզամ Քութայիսից էլ են զրում անբաւական նամակներ հայերի վերաբերմամբ («Դր.» 1883 թ. № 155), որ այնտեղի հայ երեխաններին, որոնք միայն վրացերէն զիտեն, հայոց ուսումնարանում ուղղակի հայերէնով են սկսել աւանդել ուսումնու Դիմիտրիյ քահանայ Զանաշվիլի տիրութեամբ զրում է («Դր.» 1882 № 5), վրացիք շատ բարիք են արել հայերին, Դաւիթ Վերաշինովը մնձ օգնութիւն է հասցրել թուրքերից ոչնչացնուող հայերին. «այս բարիքի փոխարէն այսօր հայերի հոգեւոր կոնսիստորիան ասում է գորեցի հայերին, որ նրանք վրացերէն լեզուով չը խօսեն»։

Ի հարկէ, երբոր հայերի մէջ զարթնեց ազգային ինքնածանաշութիւնը, սկսեցին զիմագրել վրաց լեզուին և շատ անգամ էլ չափազանցութեան մէջ ընկան։ Հայ հոգեւորականութիւնը ցոյց տուաւ այս դէպքում մեծ շովինիստութիւն, Կը բերենք մի օրինակ։ 1881 թուրքն Գորու մէջ վախճանուել է մի հայ և նրա թաղման ժամանակ մի հայ վրացերէն լեզուով դամբանական է խօսել (և ինչ պիտի անէր, եթէ ներկայ եղող-

\* ) Այս խօսքը այդպէս է գործածուած բնագրի մէջ,

Ները և Նոյնի հակ ինքը հայերէն չը պիտին և այլ հերոցներն կուրդ պատռել հանգստցալին), Երբ այս լուրը հասաւ հայոց թեմական կոնսիստորիային, ոս շատազավ թուղթ գրեց Գորու գաւառապետին թէ հետազոտեցէր, ոչ տուեց այն անձնաւորութեան իրաւունք հայոց եկեղեցու մէջ վրացերէն դամրանական ասելու (Դր. 1881 Ն 273), Այս լուր հազորդող թղթակիցը աւելացնում է վերջում. «Միթէ հայ հոգեւորականութիւնը նեղանում է, որ վրաց քաղպարում (թէկուզ վրացի քազաք էլ չը լինի) վրացի քաղպարու համար տասցին վրացերէն դամրանական ևս չմ հաւատում, որ մինչեւ այդանդ հասած լինի այն ժողովուրդի հոգեւոր գասակարգը, որի համար վրացի ժողովուրդը բացել է իր սիրտը, իր տունը, ընդունել է իր հոգի վրայ և ազատել է թշնամուց հազար կերպ և պաշտպանել է սեփական արիւնով»:

Մենք ասացինք, որ բոլորովին բնական է հայերի բնակցիան ընդդեմ վրաց լեզուի, որ նրանց մոռացնել տուաւ իրանց մայրենի լեզուն, բայց հետեւեալ լուրը այնուամենայիր շատ զարմանալի է, նամանաւանդ որ նա վերաբերում է առաջաւոր հայի դէմօկրատ պ. Արծրունու կարծիքին: Ութունական թուականներին ամենքը մեծ յօյս ունէին բացուած տեսնելու թիֆլիսի համալսարանը, ամեն օր սպասում էին նրա թոյաւրուելուն և «Մշակի» խմբագիր Արծրունին էլ հետեւեալ առաջարկութեամբ զիմեց սուսաց կառավարութեանը, մեռասասանը մեծ նշանակութիւն ունի Արևելքում Ռուսիան աշխատում է որ թիվրիայի և Պարսկաստանի հայերը նրա քաղաքական ազգեցութեան տակը լինեն... մեծ ազգեցութիւն կունենար Ռուսաստանը հայոց կրիստոնեան վրայ է, Պօւստմ. եթէ նա այնանդ բացէր ուսումնարան: Մեր կարծիքը այն է, որ Ռուսիայի այս ոյժը և ազդեցութիւնը Պարսկաստանի և Թիվրիայի հայերի վրայ ևս առաւել կ'աւելանար, եթէ որ թիվրիսի համալսարանի մէջ ուսուերէն և հայերէն լեզուներով դասաւանդունէին զիտութիւնները ուսանողներին («Դր.» 1880 Ն 65): «Դրուէրան թէսէտ խոստացաւ ընթերցողներին յետոյ մանրամասն խօսել այս տարօրինակ առաջարկութեան մասին, բայց յետոյ ոչինչ չէ զրել զրա մասին»:

Թիֆլիսի համալսարանի մէջ հայերէն լեզուով դասաւանդել—սա մի այնպիսի առաջարկութիւն է, որին չի համաձայնի ոչ մի վրացի, ինչ տեսակ միութեան էլ նա կողմանեկից լինի: Հասկանալի է, որ այնպիսի արետեղիաներով չենք պատրաստ միութեան շահիզը:

Մեր և հայոց մէջ մինչեւ այսօր էլ վրաց կաթոլիկների

հարցը վիճելի է։ Վրաց գրողների տեսակէտից ոչ միայն գոյութիւն ունեն վրացի կաթոլիկներ, այլ և վրացի զրիգորիականներ։ Այն ինչ հայերը բոլորովին ուրանում են վրաց կաթոլիկութիւնը, ով կաթոլիկ է Կովկասում, նա հայ է, առում են նրանք։ Այս երեւոյթի մասին 1876 թուին «Դրօէրատի» (№ 20) առաջնորդում կարդում ենք հետեւեալը. «Դրօէրատի» № 17-ում տպած էր Ախմացիայից ուղարկած մի թղթակցութիւն, որից ընթերցողը կը իմանար, որ այն տեղացի մի ժերերական աշխատում է բոլոր ոյժով հաւատացնել վրացի կաթոլիկներին, որ նրանք իսկական հայեր են և ոչ վրացիք։ Աշխատում է հայոց լեզուն տարածել այնպիսի վրայիների մէջ, որոնք իրանց կեանքում չեն եղել հայ և որոնք իրանք իրանց համարում են իսկական վրացի... Զարմանալի խաւնաշփութիւն է տիրում մեղանում գաւանանքի և ժողովուրդի ազգութեան վերաբերմամբ։ Պաւանանք և ազգութիւնը մէկը մէկուց չեն կարողանում զանազանել. «Ի հարկէ, շատ գովելի է, որ անհատը հաւատարիմ է իր ժողովրդին, աշխատում է իր հայրենակիցների թիւը շատացնել և ուժեղացնել Բայց այսպիսի անձնաւորութիւնը, երբ բէք չը պէտք է մոռանայ, որ իր ժողովրդի այսպիսի ուժեղանը եւ բազմանալը չը պիտի տեղի ունենայ մի այլ ժողովրդի հասուլը\*\*)»...

1880 թուին «Մշակու և «Մեղու Հայաստանի» մէջ տեղի ունէր բանակութ ազգութեան վերաբերմամբ։ «Մշակու մեծ նշանակութիւն էր տալիս լեզուին, օրինակ էր բերում մեզ որ մեր մայրենի լեզուն ոչ միայն ինքներս չենք մոռանում, այլ և ուրիշ տոհմերի մէջ տարածում ենք վրացերէնը, ինչպէս որ շատ հայ կաթոլիկներ սովորնչին վրացերէնը և այս պատճառով իրանք իրանց գլուխը համարում են վրացի։ «Մշակու ասում էր. ամեն մի վրացի կաթոլիկը հայ էր, բայց վրացերէն լեզուն վրացիացրեց նրանց։ Սրա վրայ ոմն Մեսիի պատասխանեց հայոց լրագրին և ապացուցանում էր («Դր.» 1880 № 239—240). «Վրացի կաթոլիկները իսկական վրացիներ են, եթէ նրանք ընդունել են հայ անունը այդ նրա համար է՝ որ պահէն իրանց գլուխը օսմանցիներից։ Հայն և հայ հաւատը չէր հալածում օսմանցին, քանի որ հայերը թշնամի էին և մատնող յոյների, վրացիների, եւրոպացիների։ Հայերը ծառայում էին օսմանցիներին, պաշտօնեաներ էին» և այնու ինչպէս որ վրացիք ցանկանում են վրաց լեզուի միջոցով ուժեղանալ հայոց հաշուով, նոյնպէս էլ

\*) Այս բառը բնագրին է.

Ե. Թ.

\*\*) Ընդգծումը յօդուածագրին է (Աալամիի).

Ե. Թ.

հայերը կամնում էին իրանց ուժեղանալը վրացի կոմիլիների միջոցով Սրա մէջն է արտապայտում փոխազարձ անվասահութիւն, թշնամութիւն, նախանձ, թէպէտ և քաղաքառուծ: Վրացին իր զլուխը կարծում է մի մեծ բան, իսկ հային ընդուռում՝ իրրեւ պատիկ և վշացուծ արարած, փոխազարձարար հայն էլ հպարտութեամբ է նայում վրացուն և Վրաստանը մեծ Արմենիայի մօտ ոյնչ է համարում: Համարես թէ վրացուն դուք է գալիս հայի կորուսաք և ընդհականակը: Այս երկու ազգութիւնը այսպահ ժամանակ է առում են հարեւանօրէն, բայց էլի մրմեանց առաջ չեն բաց արել միմեանց սրտերը Անկեզծութիւնը և միութիւնը առաջ աւելի շատ էր, իսկ այժմն քիչ:

Հայը զրում է թէլաւից՝ ռայտեզի հայերը առանձնացուած կեանք են վարում («Եր» 1880 № 149), նոյն է զանգատուում և մի թէլաւեցի թղթակից (1882 № 118), որ հայերը առանձնակի են աշխատում: «Մինչեւ այսօր վրացիք և հայերը իրար ճշմարիտ եղբայրների պէս էին սիրում և եթէ հիմա ձեռնուու էր այս մրութեան խախտումն, թող աշխատի սրա համար և վերջը կը երեւայ թէ ով կը վասուիր»:

Կարելի է յիշել և այն փաստը, որ հայերը բայի քազաքային իւթնավարութիւնից ուրի: Հասարակական հաստառութիւնների մէջն էլ սկսեցին այլազդիներից առանձնանալը: «Իրօւրան մասնացոյց է անում (1880 թ. № 68)՝ որ «Փոխազարձ վարկի» բանկի վարչութիւնը կարծես աշխատում է մերժել բացի հայերից, միւս բոլոր այլազդի ժողովուրդների անդամակցութիւնը և նրանց հետ զործ բռնելը»: Մեզ յայանի է, մի քանի օրինակներ, երբ վրացիներին շընդուռնեցին, թէպէտ նրանք և լու ասուտուր ունեն և անուն ու վարկ, զրում է լրազիրը: Այսպիսի օրինակները յետոյ աւելի շատացան երկու կողմին:

(կը օարունակուի)